ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2020 թվականի մարտ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 11760.0 մլն դրամ՝ պլանավորված 11300.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.1 տոկոսով կամ 460.0 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 0.4 տոկոսով կամ 48.6 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 87 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 10 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 12 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 15.5 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 85 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 45-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 10-ը՝ առևտրական գործունեություն իրականացնող հարկ վճարողների՝ արտոնագրային վճար վճարող համարվելու պայմաններին համապատասխանության, 6-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման ու ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման և 18 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել 1 բռնագանձման հայց՝ 1290.7 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 3 հայցադիմում՝ 40.0 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում կայացվել է 33 վճիռ՝ 63886.6 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից 18-ը՝ 56218.5 հազ. դրամ գումարով, բռնագանձման հայցերի, 2-ը՝ 7508.1 հազ. դրամ գումարով, սնանկության հայցերի և 13-ը՝ 160.0 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցերի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 128 վարչական գործով սահմանվել է 1661.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8829 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8395:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 70 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում մարտ ամսում կատարվել է վերադարձ 8 վարձու աշխատողի՝ 2.9 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 25 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 254 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 255 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Արցախի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման (հաշվառման) կարգը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը:

Ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել է «Արցախի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Է» սերիայի դրոշմապիտակի նմուշը և տեխնիկական պահանջները», որը ԱՀ կառավարության որոշմամբ 2018 թվականի մարտի 20-ից դրվել է կիրառության մեջ: Փոփոխություններ են կատարվել նաև հարկային վարչարարության բարեփոխումների խորհրդի, նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ու դրոշմապիտակների և ակցիզային դրոշմանիշների վերագրման էլեկտրոնային համակարգերի մշակումն ու ներդրումն ապահովող աշխատանքային խմբերի անհատական կազմերում:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում՝ երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2020 թվականի 1-ին եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 1871 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել նոր տեսակի կորոնավիրուսային վարակի տարածումը կանխարգելելու նպատակով: Մասնավորապես, հարկային մարմնի վարչական շենքերի մուտքերում և սպասարկման սրահներում տեղադրվել են ախտահանող միջոցներ, քաղաքացիների հետ անմիջական շփման մեջ գտնվող աշխատակիցներն ապահովվել են նաև անհատական պաշտպանիչ միջոցներով: Հարկ վճարող-հարկային մարմին շփումները նվազեցնելու նպատակով սպասարկող ստորաբաժանումների վարչական շենքերի 1-ին հարկերում տեղադրվել են փոստարկղեր՝ հարկ վճարողների կողմից թղթային եղանակով ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունների ընդունման համար, զանգվածային լրատվամիջոցներով տրվել հայտարարություն՝ հարկ վճարողների հեռահար սպասարկման հնարավորությունների վերաբերյալ:

Հաշվետու ամսում շարունակվել է կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակից քաղաքացիների վճարած սոցիալական վճարների գումարների վերահաշվարկի գործընթացը, որի շրջանակներում 118 քաղաքացու վերադարձվել է սոցիալական վճարի ավել վճարված մասը:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 35 տեղեկանք:

Մարտ ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 400, ելքագրվել՝ 232 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: